

« հազիւն և մեծ դազանն , որ ճանճք և մե-
ռ ժեծք կու ժողովին ի վրան , քիթն և յա-
« կանջն մտանեն , և անզոր մնայ անշափ
ռ գորութենէն » :

Շարայարեի



ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Շ Ա Ր Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Թ Ո Ւ Ա Վ Ա Ն Ը

Ա.

ԵՂԻՇԷԻ ութ յեղանակաց երբ շա-
րադրուած ըլլալը , կարևոր է գիտնալ՝ ոչ
միայն պատմական տեսակետով , այլ ևս վասն
զի ազգային դպրութեանց արտադրած ամե-
նէն գեղեցիկ գորարին , ինչպէս և մեր նախնի
մատենագրական ամենէն մեծ հանճարոյն վե-
րաբերեալ խնդիրը , արժանի են մանրակրկիտ
հետազոտութեանց :

Այլ և այլ վկայութիւններ և աւանդու-
թիւններ կան , հինգերորդ դարու առաջին
կիսուն մէջ՝ վաթսունի չափ երիտասարդաց
ուսումին աւարտելու համար յեղեսիա , յԱ-
զեքսանդրիա , յԱթէնս զրկուած , և Եղիշէի
ալ անոնցմէ մէկն եղած ըլլալուն : Թետա-
գայ զրիւք կը յիշատակեն անոր երկասի-
րութիւնը իբրև ականատես պատմիչ : Գժուա-
րին է ևս դուրս ձգել զայն ի հինգերորդ
դարէ . քանզի ամէն ազգի մէջ նշանաւոր
մատենագիրը իրենց կրած ազգեցութիւննե-
րով , գաղափարօքն և սոնով մէկ մէկ դարու
զրոյմն ունին :

Բայց այդ ամէն վկայութիւններն և ա-
ւանդութիւններն՝ որք ընդհանրապէս բաւական
կը սեպուին մատենագրաց ժամանակը հաս-
տատելու , մենք առ այժմ իբրև շեղեալ պի-
տի համարինք . և հինգերորդ դարու հետ ու-
նեցած պատշաճութիւնն ալ՝ պիտի ենթա-
դրենք կասկածելի կամ աւարակելի : Պիտի
քննենք Եղիշէի պատմութիւնը իբրև թէ
վանքի մը դարանէն առաջին անգամ այսօր

երևան ելած ըլլար , և ամենեւին յիշատա-
կութիւն մը ունեցած ըլլայինք անոր նկատ-
մամբ :

1. Եղիշէ զիւր պատմութիւնը կ'ընծայէ
Մամիկոնեան Դաւթի երիցու , որոյ հրա-
ճանաչ կը գրէ , և որ , ըստ Փարպեցւոյ՝ ներ-
կայ գտնուած էր ի ժողովին Արտաշատույ :

2. Առաջին յեղանակին սկիզբը կ'ըսէ .
« Ահա ոչ ըստ կամաց արտասուալից ողբովք
ճառագրեմք զբազում հայուածս , յորում պա-
տահեցար և մեք իսկ ականատես լինելով , » :

3. Թագկերտի նկարագիրն ըրած ատենն
ալ կը դնէ . « Չանցս իրացն պատմեմ . . .
ոչ ի կարծ ընդոստուցեալ , և ոչ ի լուր գար-
թուցեալ . այլ ես ինքնին ի տեղուջն պա-
տահեցի և աեսի , և շուայ զճայն բարբառոյ
յանդգնարար խօսելով . իբրև զհողմն սաստիկ՝
զի բախիցէ զծով մեծ , այնպէս շարժէր և
սաստանէր զամենայն բազմութիւն զօրաց
խրոց , » . (էջ 27) : — Աւարայրի ճակատին
ալ ներկայ գտուած էր . « Որպէս յայսմ ժա-
մանակի տեսաք աչօք մերովք , զի զնոյն նա-
հատակութիւն նահատակեցաւ և աշխարհս
Հայոց , » . (էջ 172) :

4. Ղեւոնդեանց մահուան նկատմամբ պատ-
մածները շատ էր խուժաստանցի վաճառա-
կանէ մը , որ ներկայ գտնուեր էր անոնց նա-
հատակութեան յԱպար աշխարհի (Խորասան) .
(էջ 322) :

5. Ութերորդ յեղանակին մէջ ալ . « Իսկ
կանայք երանելի առաքինեացն և կասկեղոցն
և անկեղոցն ի պատերազմին , ընդ ամենայն
աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ
կարեմ . զի բազում այն են զոր ոչ գիտեմ ,
քան թէ պիտիցեմ : Չի հիմք հարիշրով
լստի յականէ յանուանէ ձանալեմ . ոչ որ
միայն աւագազոյնքն էին , այլ զբազումս ի
կրեւրագունաց անտի , » . (էջ 354) :

6. Որ կարևորագոյն է քան զվերոյ-
գրեալսն . Եղիշէ երրորդ յեղանակին սկիզբը
կը զրուցէ մեզ , թէ ինքն ալ Պարսկաստան
զմացեր էր վարդանայ և այլոց նախարարաց
հետ , որք կանուներ էին ի Գուգն , եպիս-
կոպոսաց անյեհնբ պատասխանայն վրայ . կր
հասկցնէ մեզ ևս թէ այլոց հետ Թաղկերտի

բունութեան առջեւ տկարացեր էր և ուրացեր զճշմարտութիւն հաւատան, և արեգական պաշտօն մատուցեր ընդ նախարարան. (էջ 91—96) :
 « Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն շարին, որ անցք անցին անդէն ի կարուանին՝ ընդ գունդն Հայոց, սակայն և ոչ լռել կամիմք ժամկետով զլիշտո նեղութեանն. այլ ասասցուք փոքր ի շատե, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ որք զսոսնապէս զմեզ ողբային. զի և զու յորժամ շոտիցես, ոչ սակաւ արտասուտ հեղուցուտ ի վերայ ազգին թշուառութեան », և այլն :

Այդ ամէն խօսքերը ի միասին՝ մանաւանդ երբ հեղինակ մը զիւր անձն և զհոգին կը գնէ գրութեանը մէջ, կատարեալ բարոյական ստուգութիւն մը կը կազմեն, թէ արգարեւ. Եղիշէ իւր նկարագրած իրաց ժամանակակից, ականատես և մասնակցող պատմիչն է : Մատենագիր մը որ պատիր կարեորութիւն մը ստանձնելու համար ինքզինքը ականատես ուզէ հուշակել, ոչ այգպէս հանգամանօք և պարզապիտ ըբրմամբ կը խօսի, և ոչ իւր անձին այնքան աննպաստ խոստովանութիւններ կ'ընէ :

Յարգի բանասիրաց օմանք՝ Արտաշատու ժողովոյն մէջ ներկայ գտնուող Ամատունեաց եպիսկոպոսը զԵղիշայ՝ կարծեցին զնա : Արգարեւ Սահակայ և Մեարոպայ աշակերտաց շատերն յեպիսկոպոսական աստիճան բարձրացան. բայց Յովսէփ, Եզնիկ, Մուշէ, Թաթիկ, Երեմիա եպիսկոպոսքն, ինչպէս և երէցն Ղեւոնդ, որք նախազան կամ անզամբէին նոյն ժողովոյն, առային աշակերտանեւրէն են¹. մինչ երկրորդ կարգի աշակերտքն, որոց զասէն էր Եղիշէ, հազիւ թէ վեց եօթը սարի էր, որ ուսումնին աւարտելով զարձեր էին ի հայրենիս : Գրչագիրք առ հասարակ զնա վարդապետ² կը կոչեն. վասն որոց վերջ-

նոց կարծիքը անուանց նմանութենէն զատ բնաւ հինն չունի :

Բայց որովհետեւ խոստացանք Եղիշէին կատմամբ ո՛ր և է աւանդութիւն կամ յիշատակութիւն նկատողութեան շանուով, նայինք թէ իր պատմութեան կրնայ հետեւիլ՝ որ Ամատունեաց եպիսկոպոսն ինքն ըլլայ :

ա. Պատմութեան ճակատը Դաւթի երիցու Մամիկոնեանի ուղղեալ ընծայականին բացատրութիւններէն՝ յայտ է թէ սորա հեղինակը աստիճանաւ ասելի բարձր մէկը չէր :

բ. Վերջը տեսանք որ Միհրնբերեհի նամակին արուած պատասխանոյն վրայ՝ Յազկերտ բարկացած, անարգանք ի Դոռն կոչեց զնախարարան Հայոց, և թէ ասոցք ընկերացաւ Եղիշէ : Այդ հնարաւոր չեղեկի որ այգպիսի խանակ պարագայից մէջ՝ եպիսկոպոս մը, — նա մանաւանդ Ամատունեաց Տեսան վահանայ հետ՝ Ամատունեաց եպիսկոպոսը — գնացած ըլլայ ի Դոռն Պարսից, ու երկուքն ալ թափուր թողուցած ըլլան միանգամայն զլիճակն : Պարսկաստան զըտնուող հայ եկեղեցականք բանակին ընկերակցող քահանայք էին. (տ. էջ 96) :

գ. Եթէ մեր հեղինակը Ամատունեաց եպիսկոպոսն ըլլար, Ամատունեաց Տանուտէր վահանին վրայ գտնէ երբեմն գրուածօք խօսելու էր : Արգարեւ Դեմշապոյ անիրաւութիւնները և հասուցած չարիքը մի առ մի ի համար առած աստեր՝ (էջ 39) կը դարձիւ զնա, մանաւանդ պաշտօնանկ ընելու համար զհազարապետն աշխարհին, որ « իբրև հայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից », առանց սակայն այդ հազարապետին ո՛վ ըլլայն անզամ իմացնելու. այն-

կան գիտութիւնն ալ ի միասին առնելով : Ըստ Տապարիի, Պարսիկէ ալ Միհրնբերեհի ասէին « Վարդապետաց Վարդապետ » (herbedan herbed), զոր եպիսկոպոսունք իրենց պատասխանուոյն մէջ կը թարգմանեն « յոյժ իմաստուն ». Herbed ամբողջեալ պարսկերէն ձևն է Աւետաւայի Aôthrapaiti անուան, որ է « վարդապետ » : Եղիշէն ինքնին զվարդապետ անունը տայ՝ ոչ միայն քահանայից, մոռաց, այլ և աշխարհականաց և կանանց :

1. Տես Ն. Գարեգին Վ. ի Պատմ. Հայ Գրչուրութեանց :

2. Եթէ այդ տիտղոսը վերջի ժամանակաց մէջ արուած է նմա, կարեւորութիւն չունի. իսկ եթէ Եղիշայ կենդանութեան աստին, յայնժամ նշանակէ Docteur, ուսուցիչ, գիտուն (կրօնա-

պէս որ եթէ ուրիշ պատմագիր չունենայինք, պիտի չզիտնայինք որ խօսքը վահանին վրայ է : Այդ գովութիւնը ոչ թէ վահանը մեծացնելու այլ՝ Պենդապոյ յանցանքը ծանրացնելու դիտմամբ գրուած է :

Ութ յեղանակաց ինչպէս և Միանձանց ճառին, շարագրոյն Եղիշէ՝ ոչ եպիսկոպոս է և ոչ քահանայ, այլ այր զհնաութական, որոյ կը հրամայուի գրել « Հայոց պատերազմին », պատմութիւնը. նա ալ հրամանը կր կատարէ ու պատերազմի պատմութիւն կը գրէ (էջ 5). անկեղծ հաւատացեալ մը, որ այն պարուն ուսեալ քրիստոնէից պէս քաջ հմուտ է սրբազան մատենից, բայց կրթութեամբ՝ մտքով և սրտով՝ զինուոր. որոյ համար ամենէն պանծալի բանն է « առաքինութիւն », այս է զինուորական քաջութիւն. ամէնէն մեծ յիշտ՝ տեսնել « այնպիսի պատուական զինուորութիւն ի շարաշուք անարգութեան », որ ամբողջ գրութեանը մէջ զ՝ քաջ պատերազմողս », կամ զ՝ « անասական », կը նախադասէ « սուրբ քահանայից », անգամ և նախարարաց. որ զինուորական համարձակութեամբ կը յայտնէ ինչ որ այլք առ առուեսն լռելիայն կամ զգուշարար կը հասկըցնեն, (տես էջ 96—97), և որ Աւարայրի մէջ՝ Հայոց ինչպէս արուելը անզն ի տեղը ցուցանելով հանդերձ, արիութեամբ կուսած զօրականի պարծեկոտութեամբ՝ շուգեր զվըրնամին յաղթող ճանչնալ :

Սպարապետին անձնուէր սմն եղած ըլլալը կը հետեի ընդհանուր պատմութեանէն. և ամենայն իրաց և պատերազմաց մէջ անոր հետ գտնուած ըլլալուն ալ բաւական ապացոյց է գրութեանը մէջ ցոյց տուած ռազմագիտական կատարեալ հմտութիւնը : Ազգաց և աշխարհաց մեծամեծ եղելութեանց իրարու հետ ունեցած զինուորական աղերքն և կապակցութիւնքն՝ աչքէն երբէք չեն վրիպիր : Զօրաց՝ կացն և մնացն, և բանակելն, բանակաց կազմութիւնը, խաղաքմանց եղանակը, պատճառը, նպատակը, այնպիսի ճշդութեամբ և խելահաս մտօք կը նկարագրէ, որչափ կրնայ սպասուիլ այն ժամանակի զօրապետէ կամ պատերազմափորձ մատենագրէ : Այդ գիտութիւնը ստացեր էր անշուշտ

վարդանայ պէս նշանաւոր զօրավարի զինակիր (aide-de-camp) և քարտուղարն ըլլալով¹ :

Եղիշէի՝ ժամանակակից պատմիչ եղած ըլլալուն անհրեքելի ապացոյց մի ալ կ'երեւի մեզ, սկիզբէն ցվերէր անընդհատ՝ եօրձ յեղանակաց մէջ ցուցուցած թարկութիւնը, և ութերորդին և Միանձանց ճառին խորին թախծութեամբ խմբութեալ գրութիւնը, որ սակայրի ճարտարութեան և արուեստի արդիւնք չի կրնար ըլլալ : Այնքան զգածեալ է նա՝ որ եթէ հասարակութիւնը զիր գրել տես, կրիցը բացատրութիւնքը չես կրնար սպասել. և ինչ նիւթոյ վրայ որ խօսի, անիթ կը գտնէ իւր օրաին վերջը քեզ յիշեցնելու (տ. էջ 374) :

Եղիշեայ հանձնարոյն մէկ մեծ յատկանիչն ալ է՝ վերջին ծայր դիպրատիպ (plastique) բնութիւնն, որով գրութիւնը ճշմարտատիպ պատկեր եղած է աշխարհին : Թէ այն ժամանակի հանգամանաց, օտար զուգակից դիպաց, Հայոց և Պարսից բարոց՝ սուրբութեանց և օրինաց, և աշխարհագրական դրից վրայ ո՞րչափ ճշգրիտ տեղեկութիւնք, ակնարկութիւնք ամիտփեալ կան այդ գրքուկի մէջ, զայցէ ստուար մտանուն մի նախակական ըլլալ մի առ մի ցուցանելու և պարզելու : Բայց այդ ամէնը քեզ հասկցնելու դիտաւորութեամբ կարգաւ և ոճով յստալ չի բերեր, այլ շատ անպամ՝ երկրորդաբար և զօրցես պատահմամբ : Իւր միակ նպատակը նախատակաց քաջութիւնը, և յետս կասելոց վաստաբարութիւնն

1. Եղիշէի յատուկ՝ բայց չգիտեմ որ զարու մէջ գրուած կենսագրութեան մէջ, որ սակայն սուելի հին աղբւրէ առնուած կ'երևի, հետեւեալը կը կարգանք :

« Պատմի վառն երանելոյն Եղիշէի թէ էր զինուորեալ արքոյն վարդանայ և սպասաորդի մեհա, և էր հաւատարիմ յամենայն իրս ստուածայինս և մարդկայինս. և կեցեալ և վարժեալ բարեպաշտութեամբ և ամենայն անցից անցելոց ընդ Հայոս որ Պարսից հասին վասնզք ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, խնչաւոտ և զնայ պատերազմաց և յարդոտեանց և հաւածանաց եկեղեցւոյ և սասանիւնոտեան և քարոտեան վարդանայ... և պատմագրեալ զայս ամենայն » և այլն. Սփեքք. Հայկ. հտ. ԺԱ. էջ 39 :

արձանագրել է. բայց սրովհետեւ հանճարոյն եզակիան մէկ յատկութեամբն ամենայն ինչ կը տպաւորուէր իւր մտացը մէջ, քեզ ալ կը հաղորդէ պայնսոսիկ : Ն, ման քաղաքի կամ բնութեան նշանաւոր տեղույ լուսանկար պատկերին, որ կը ցուցանէ ի մտառու և խոշոր չափերով զատարկայն՝ որոյ արագաւ այս պատկերը առնուած է. միանգամայն յայտ մը մտ և հետաւոր շրջակայ պէսպիսի և մանրամասն հանգամանք, որք աւելի փոքր չափերով նկարուած ըլլալուն համար նուազ ճշմարիտ և ճշգրիտ չեն, բայց առիտ մեծ ուշադրութեան կարօտ :

Մինչև ցայս վայր, Եղիշեայ սկանառես վիպագիր կամ, եթէ ուզէք, գիւցազներգակ ըլլալը — քանզի երկասիրութիւնը բացարձակապէս անկեղծ պատմութիւն է միանգամայն և զիւցազներգութիւն — անոր վեց եօթն վկայութեամբքը և գրութեանը մեր վրայ ըրած թուարկութեամբը՝ ջանացինք հաստատել : Բայց այդ գրութեանց մէջ հատած մի կայ, որ կարող կ'ընէ զմեզ ըմբռնել յանգագատս Եղիշէ և ապացուցանել ոչ միայն իրեն ժամանակը, այլ և գտարիւն յորում ի գիր առասգեօթն յեղանական :

Եղիշէ իւր պատմութիւնը կը սկսի կարգէ զօրս կիրք և բարկութիւն յայտնելով Յազկերտի դէմ. մերթ զնա կը նմանեցնէ կապարճի՝ զոր սաստանայ կը լեցնէր գեղեւալ նետիք, կամ ցլոյ՝ որ եղիշէր ածէր անօրէնութեամբ, և զոռալով հոգ հանէր ընդ շորս կողմանս երկրի. մերթ կատաղի զազանի՝ որ կը յարձակի շրջակայ աշխարհաց վրայ և կ'աւերէ և կ'այրէ զամենայն ինչ : Ն, մանութիւնները՝ իրարմէ կենդանի և վեժմ, կը հոսին ետեւ ետեւ, կշտամբանք կը յալորգին իրարմէ սաստիկք, բայց Եղիշէ չի գոհանար : Այգքան շարեաց և փաստաց պատճառ եզոզ Պարսից պետութեան մօտալուտ կործանման յայտնի նշաններ կը տեսնէ .

« Նա և արլը օրհասակնք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնք կուտին. յորոց՝ և ի մաստունքն տեղի տուեալ փառչին ի նոցանէն : Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանի՞մ լզգան, և եթէ հարկանե՞մ յիմանան. և իրքեա ոչ

գտանի արտաքին քշնալի, ընդ սեճիկն իրեանց մարտ եղեալ կռոռիւն : Ի դէպ իսկ ելանէ բան մարգարէին ի վերայ նոցա. Այր, ասէ, առ քաղցի իւրում՝ շըլեցի և կերկցի զկես սեճիկն իւրոյ. նման զմին և Տէրն ինքնին ասէ. Ամենայն տուն և քաղաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն » :

Արդ առաջիկ այդ տողերը չէր կրնար զրել Եղիշէ՝ բայց միայն յամս 457 և 458, յորում ժամանակի Պերոզ և Ռոմիզո՝ որդիք Յազկերտի, իրենց հօր թողուցած արժողը իրարու ձեռքէ յափշտակելու համար՝ քաղաքական պատերազմաւ կը պատահէին զպետութիւնն, զոր Յազկերտ այնքան անխոնջ ջանեալք աճարակողներ էր : Երկուց եղբայրք կոխն մտնող այդ երկու արկները տեսած էր, մինչև որ 458ին վերջերք Պերոզ՝ Քուշանաց օգնութեամբ, որոց բով ապաւիններ էր, Ռոմիզոյ յաղթելէն և զնա սպանանելէն ետքը՝ քսան և չորս տարի (459—483) միահեծան և անլրող և մեծաւ պայծառութեամբ կառավարէր էր վերստին զպետութիւնն : Ուրիշ ներքին վրդալման յիշատակութիւն յունիք մինչև վաղարշայ որդւոյն Չարհի ընդլզիւն հօրը դէմ, որ աւելի մասնական ապստամբութիւն մի էր՝ քան քաղաքական պատերազմ, և որ հայկական այրուձիոյն հասնելովն զիւրաւ ընկճեցաւ : Հինգերորդ դարուն վերջերն ալ (498ին) կաւառ՝ Մազաթաբայ ազանդին հետեւելուն համար՝ յաթուէն ձգուեր էր, բայց անմիջապէս տեղն անցած էր Զա մասպ՝ առանց ներքին խռանակութեան : Իսկ անկէ ետքը Սասանեանց ինքնակալութիւնը զեռ շատ փայլուն օրեր պիտի ունենար, մինչև որ Արաբացոց զարհուրելի յարձակմանն ապստապուտ խորտակէր, յամին 651 :

Բայց այդ 457 կամ 458 թուականը եօթն յեղանակաց միայն կը պատկանի, զորս շարագրեց Եղիշէ՝ երբ այնքան սիրելեաց կորստեան և աւերմանց կսկիծը տակաւին չէր ամոքած, (վեց կամ եօթը տարի Աւարայրի ճակատէն ետքը), և Դաւթի երեցու հրամանաւ ձեռնարկելուն եթէ նայինք, հաւանօրէն Մամիկոնեանց զղեկին մէջ, վասն զի ութերորդ յեղանակին հանգարտ և պատ-

մական ձևը և իմաստասիրական խորհրդա-
 ծուլթիւնքը մեծապէս կը տարբերին միւսոց
 վառվուռն կրքոտ և բանաստեղծական գրու-
 թեանէն: Բաց ասկէ, Եղիշէ՝ ընծայականին
 մէջ, զոր եօթն յեղանակները աւարտելէ
 յետոյ շարադրած կ'երևի, կը հաստատէ ինք-
 նին, թէ յեօթն մասունս բաժաներ էր զիր
 պատմութիւն . և եօթներորդ յեղանակին
 վերջին տներէն ինչպէս, և գրութեան բնա-
 կան ընթացքէն ալ, կը հետեւի թէ ի սկզբան
 իրապէս վասակայ մահուամբ կը վերջանայր .
 Հարկ է ուրեմն ժամանակի բաւական երկար
 միջոց մը գնել և Եղիշէի կենաց մէջ մեծ
 փոփոխութիւն մը ենթադրել եօթներորդին
 շարագրութենէն ետքը, որոյ վերայ կը յու-
 տանք ուրիշ առթիւ խօսել:

Եթէ, ի վերջ բանիցս, ազգային պատմը-
 յաց և աւանդութեանց գառնալով՝ զԵղիշէ
 իւր ընկերներովը յԱսորիս և յԱղբըսանդրիտ
 գնայու համար նամբայ ելած ատենը (434ին)
 քսան տարեկան ենթադրենք, եօթն յեղա-
 նակները ի զիր առած միջոցին 43 կամ 44
 տարեկան պիտի ըլլար:

Շարայարեշի ՄԻՔԱՅԷԼ ՓՈՐՔՈՒԿԱԼ ՓԱՇԱ



Յ Ի Շ Ա Տ Ա Կ

ՄԻՔԱՅԷԼ ՓՈՐՔՈՒԿԱԼ ՓԱՇԱՅԷԻ



Ս Ս մեր խոստման, կուգանք ահա նուր-
 բելու հետեւեալ մի քանի էջերը՝ նախորդ
 յօդուածի հմուտ հեղինակի յիշատակին:

Կան մարդիկ, որոց բոլանդակ կենացն ան-
 ընդհատ ճիգ մ'է, յուսահատ ճիգ մի՛ դէպ
 ի այն ամէն բան՝ որ մեծ եւ երջանիկ կ'ը-
 նէ զմարդ. բայց ի գոհ. զի հակառակ ի-
 բնեց բոլոր ճգանց՝ կը մնան միշտ փոքր,
 միշտ թշուառ: Կան նա ալլք, որք հազիւ
 բախտին փայփայանքը կը զգան, եւ ահա
 հարուածք, վիշտք եւ ձախողութիւնք կը յա-
 ջրողեն, ժպիտն ի լոց կը փոխուի, ծաղիկն
 փոշ կը գտանայ: Կը գտնուին նաեւ ամե-

նասակաւք, հազարէն մին, որք խանձարու-
 քէն թուին յերջանկութիւն սահմանուած,
 որոց կենաց շաւիղն ծաղկամբք գծուած է,
 եւ թողած հետքերնին՝ լուսաւոր, եւ որոց
 յաջողութեանց կամ փառաց շէնքն՝ ոչ թէ
 բախտէն ընծայուած զիպաց՝ այլ ստոյգ եւ
 իրական արդեանց վրայ հիմնուած՝ բնա չի
 խախտիր, բայց երբ կենաց ճրագն կը մա-
 րի: Այս վերջնոց դասէն եղաւ մեծանուն
 հանգուցեալ վսեմ. ՄԻՔԱՅԷԼ ՓԱՇԱ ՓՈՐ-
 ՔՈՒԿԱԼ, զոր մահն յանակնկալս խլեց ի
 6/18 նոյեմբերի անցեալ (1897) տարւոյ,
 զեռ տողք հասակի մէջ, ի խոր սուգ հա-
 մակելով նորա սիրասուն ընտանիքը, զիջքը
 սիրող եւ յարգող բարեկամները եւ ծառօթ-
 ները. եւ ինչու չըտենք՝ բոլոր հայ ազգը .
 որ՝ թերեւս քան ուրիշ ժամանակ՝ պէտք ունէր
 մի այնպիսի մեծանորի, եւանդուն եւ երախ-
 տատը գործելի: — Միշտ ամենայն ազ-
 գային օրաթերթքը եւ հանդէսք, ոչ սակաւ
 օտար լրագիրքը եւս*, տխրութեամբ ծանու-
 ցին մահը եւ լիուրի գովութեամբքը զրուստե-
 ցին մեծանուն հանգուցելոյն արժանիքը,
 անըստգիւտ վարքը եւ անխնով գործօնեւ-
 թիւնը, որքան աւելի պարտականութիւն
 մ'ունինք մենք, — աւելի սերտ եւ անձուկ
 կապեր սնելով նա մեր հետ՝ Միբարնու-
 թեանս ամենէն աւելի սիրող եւ սիրելի
 անձերէն մին լինելով, — իրեն նուիրելու
 մի քանի էջերը թերթիս, զոր նա ինքն՝ իւր
 կենդանութեան միջոց այլեւայլ անգամ պա-
 աուեց իւր ծանրակշիռ յօդուածներով:

Ծնած է ի Միջագիւղ (Կ. պոլսոյ), յա-
 մին 1842, որդի փորթուգալ. Յովսեփայ,

* Յիշենք, օրինակ իմն, Գաղղիոյ Նշանաւոր
 Le Temps թերթը, որ իւր 13322 համարին
 մէջ, նոյն աւուր հեռագրաց մէջ զետեղեր էր
 նա եւ հետեւեալը.

« Կ. Պոլսոյ » 23 նոյեմբ. 1897 ».

« Միբայել փաշա փորթուգալ, կաթողիկէ
 հայ, վեց տարիներէ ի վեր նախարար Անձնա-
 կան Գանձու Սուլթանին, վախճանեցաւ: Եղբը
 էր նա զարտաշար մեծ եպարզոս Ալի փաշայէ,
 տեսուչ մաքսատան, խորհրդակալ Ելեւմտից
 նախարարին եւ վերատեսուչ Երկրագործական
 զբամաստան Գերագանց մատակարար մ'էր նա
 կայսերական գանձուն եւ անստգիւտ անձ մի.
 եւ այլն »: